

ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ԿՈՒՅՍԻ ՎԱՆՔԸ

«Զօրք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին, և կանայք ի յերկինս գրեցան վինաւորք, կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին, խաչակից լինելով կուսածին արարչին» (Կոմիտաս կաթողիկոս):

«Հրեշտակների զորքերը մարդկանց հետ տոնեցին, և կանայք երկնքում վինվորագրվեցին, մահվանը հաղթեցին պատերազմելով իրենց կուսությամբ, խաչակից լինելով կուսածին արարչին»:

Քրիստոսի Ս. Ավետարանի քարոզության և քրիստոնեական հավատքի տարածման գործում նահատակ մարտիրոսների և Հայ Եկեղեցու սրբերի շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Հռիփսիմյան և Գայանյան կույսերը: Անհուն սիրով նվիրված իրենց հավատքին, արհամարհելով և չընդունելով հեթանոսական չաստվածներին, Հռոմեական կայսրության մեջ ենթարկվելով բազմաթիվ հալածանքների, նրանք փախչում են Հայաստան աշխարհ և թաքնվում Վաղարշապատի հնձաններում: Բայց հեթանոս Հայաստանում քրիստոնյա կույսերը ենթարկվում են նման հալածանքների և Տրդատ հայոց թագավորի հրամանով նահատակվում:

Ըստ Ագաթանգեղոս պատմիչի վկայության, Ս. Գրիգոր լուսավորիչը 301 թվականին կառուցում է նախնական վկայարաններ, որտեղ և ամփոփվում են Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե կույսերի և նրանց 35 ընկերուհիների՝ նույն ճակատագրին և նահատակության պսակին արժանացած հոգևոր քույրերի նշխարները:

Նույն Ագաթանգեղոսի վկայությամբ, Ս. Գայանե հինավուրց վանքը կառուցված է ճիշտ այն տեղում, որտեղ Ս. Գայանե կույսը նահատակվել է իր երկու ընկերուհիների հետ: Հավանաբար այստեղ ե դարում հաստատվել է վանք և միաբանություն: «Եւ վմիուսն լինեցին ի հարաւկողմն կուսէ անտի, ուր վկայեաց Գայիանէ նորուն սնուցիչն երկու ընկերօքն»:

Շուրջ 329 տարի պատմիչները լռում են և ոչինչ չեն խոսում Ս. Գայանե վանքի մասին: Ըստ Ժ դարի պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու վկայության, 630 թվականին Եղր կաթողիկոսը Ս. Գայանեի խիստ մթին ու խղճուկ շինությունը հիմնովին քանդել է տալիս և տեղը կառուցում սրբատաշ քարով մի հոյակերտ ճարտարապետական կոթող՝ վանք, որը կանգուն է մինչ օրս: Ս. Գայանե վանքը իր կամարների բարձրությամբ, ճարտարապետական այլ խնդիրների լուծումով և մոնումենտալությամբ եկակի տեղ է գրավում հայ ճարտարապետական հուշարձանների շարքում:

Եղր կաթողիկոսի կողմից Ժ դարում Ս. Գայանե վանքի վերակառուցումից հետո, մինչև ԺԷ դարը, պատմությունը դարձյալ լռում է այս մասին:

ԺԷ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին մեծ վշտով է խոսում Ս. Գայանե վանքի անմխիթար վիճակի մասին: Նա գրում է, որ Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե եկեղեցիները դարձել էին անմարդաբնակ անապատ, անպարիսպ, դռներ չկային, եկեղեցիների խորանների մուտքերի, տանիքների երեսապատված քարերը ամբողջովին թափվել էին, մանավանդ Ս. Գայանե վանքինը, որտեղ մնացել էին համարյա միայն պատերը, և կամարներից՝ հյուսիսային մասը: Այս մասին Դավրիժեցին ասում է. «Եւ ի ներսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցւոյն քանդեալ և բո-

Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՐՄԱՐՅԱ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ

վանդակ եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալ, վասն կի յաւուրս ամարայնոյ և ձմերայնոյ անասունք, որպէս եկինք և ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն և Գայանեայ տաճարի տանիքն բովանդակ իջեալ

Եղիազար Ա Այնթապցին եկեղեցուն կից կաթողիկոսների գերեզմանների վրա կառուցել է տալիս ծածկ-հավելված՝ անձրևից ու ձյունից պահպանելու համար դրանք:

Չի կարելի չհիշատակել Գևորգ Դ կաթո-



Ս. Գայանե եկեղեցին՝ վերանորոգված

էր, և որմունքն միայն կային կանգնեալ և ոչ այլ ինչ»:

Ըստ Առաքել Դավրիժեցու, Փիլիպպոս Ա Աղբակեցի կաթողիկոսը (1633—1655 թթ.) որոշում է նորոգել այս եկեղեցին և 1651 թվականին կատարում է հիմնական նորոգում: Փիլիպպոս կաթողիկոսից հետո, Եղիազար Ա Այնթապցի կաթողիկոսը (1681—1691 թթ.) 1688 թվականին կատարում է մի շարք վերանորոգչական աշխատանքներ, որոնք հիշատակված են վանքի արևմտյան մուտքի ձախակողմյան մասում:

դիկոսի ժամանակ Ս. Գայանե վանքի վանահայր, բազմավաստակ գիտնական և եկեղեցական, իրավունքի հմուտ մասնագետ Վահան վրդ. Բաստամյանցի կատարած մեծ և հիշատակելի վերանորոգությունների մասին: Վահան վարդապետը 1872 թվականին նորոգեց տաճարի խախտված որմերը և բացեց ու մեծացրեց հյուսիսային դուռն ու լուսամուտները: Միաժամանակ նորոգեց վանահոր ու ուխտավորների սենյակները և ավելացրեց այդ սենյակների թիվը: Տպագրական մեքենա բերել տվեց և սկսեց հրատարակել «Դպրոց»

ամսագիրը: Սենյակներից մեկում դպրոց բաց արեց՝ երեխաներին հայերեն ու ռուսերեն լեզուներով ուսում տալու համար:

Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԱՏԱՐԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խրիմյան Հայրիկի օրերից մինչև Վազգեն Ա Հայրապետի գահակալությունը ոչ մի նորոգություն չի կատարվել Ս. Գայանե վանքում: Վեհափառ Հայրապետը Իր անդրանիկ կոնդակում, ի մխիթարություն հավատացյալ հայ ժողովրդի, գրում է. «Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերապարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Խոր-Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի, և վմայելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

1956 թվականին Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախումբը մշակում է մի նախագիծ և ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարի, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ տաճարների և նրանց շրջակա շենքերի վերանորոգման և բարեկարգման համար: Համաձայն այդ նախագծի, վերանորոգման աշխատանքներ պետք է կատարվեին նաև Ս. Գայանե տաճարում, բարեկարգվեին վանքի շրջափակը՝ իր պարիսպներով, ինչպես նաև պարսպապատվեին և բարեկարգվեին Ս. Էջմիածնի միաբանների գերեզմանատունը:

Վերջին ժամանակներս Մայր Աթոռի բարերար, լոնդոնաբնակ Հարություն Մութաֆյանի միջոցներով հիմնովին վերանորոգվում է եկեղեցու տանիքը և գմբեթը՝ ի հիշատակ իր հոր՝ Նիկողոսի, եղբոր՝ Մարկոսի, հորեղբոր՝ Խաչիկի և մյուս հարազատների: Գմբեթի երկաթյա հին խաչը փոխարինվում է բրոնզակերտ նոր խաչով: Որպեսզի վերականգնվի և ամբողջական դառնա վանքի նախնական տեսքը, մաքրվում է եկեղեցու ներսի ծեփը:

Հիմնովին վերակառուցվում է պատարագի Ս. Սեղանը: Այդ առթիվ Ս. Գայանե վանք է տեղափոխվում Ս. Էջմիածնի Մայր տաճարի Իջման Ս. Սեղանի մարմարյա սյունազարդ գմբեթը և տեղադրվում Ավագ խորանի վրա:

1960 թվականի մարտ ամսից սկսվում է Ս. Գայանե վանքի հողամասի լրիվ պարսպապատումը՝ սրբատաշ կարմիր տուֆ քարից: Մարմարյա սալիկներով նոր տապանաքարեր են դրվում 1920 թվականից վանքի շրջապատում թաղված Մայր Աթոռի հանգուցյալ միաբանների գերեզմանների վրա:

Համաձայն Վազգեն Ա կաթողիկոսի ծրագրերի, Ս. Գայանե վանքի շրջափակում կառուցվում են մայթեր, իսկ հողային մասերը՝ լրիվ կանաչապատվում: Եկեղեցու պատերը, դրսից և ներսից, ամրացվում են ցեմենտի լիցքով: Ամբողջովին վերակառուցվում է եկեղեցու հարավային մուտքի խոնարհված պորտիկը:

Կառուցվում է վանքի մատաղատան նոր համալիր՝ իր բոլոր օժանդակ հարմարություններով:

1910 թվականին Նոր Նախիջևանի հայությունը սև գրանիտե տապանաքար է բերում Ս. Գայանե վանք՝ տեղադրելու նահատակ կույսի գերեզմանի վրա: Ժամանակի աննըպաստ պայմանների պատճառով քարը անուշադրության է մատնվում և մնում հենված եկեղեցու հարավային պատին՝ խորանի մուտքի մոտ: Այժմ այն ագուցված է կույսի դամբարանի արևելյան պատին:

Առայժմ վանքի վերանորոգչական աշխատանքները շարունակվում են: Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո վանքը նոր և գեղեցիկ տեսք կստանա:

Վերանորոգման աշխատանքները կատարվել և կատարվում են Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի կողմից՝ Վեհափառ Հայրապետի անմիջական ցուցումներով:

ԳՈՒՐԳԵՆ ՔՀՆ. ԱՇՈՒՐՅԱՆ
(Ս. Գայանե վանքի վանահայր)